ՔԱՐՈԶԽՈՍԱՔԳԱՂ

ՏԵՐ ՎԱՉԵ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԳՅՈՒՏ ԽԱՉԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(28 հոկտեմբերի, 2012)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«Խնդրեցէք նախ զարքայութիւնն
Աստուծոյ եւ զարդարութիւն Նորա»
(Մատթ. Զ. 33):

Սիրելի՛ հավատացյալներ. այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբում է Երուսաղեմում Տիրոջ Խաչափայտի գտնվելու տոնը, որն անվանվում է Գյուտ Խաչ, եւ տերունական Խաչին նվիրված չորս տոներից մեկն է: Այս տոնի հիմքում ընկած է մի պատմական իրադարձություն, որ տեղի է ունեցել Դ. դարում: Երբ այդ նույն Դ. դարի սկզբին Կոստանդին Մեծ կայսեր կողմից Հռոմեական կայսրության տարածքում դադարեցվեցին քրիստոնյաների նկատմամբ շուրջ երեք դար շարունակ տեւող անողորմ հալածանքները, բնավ պատահականություն կամ պատմական բնականոն ընթացքի հետեւանք չէր: Կայսրն անձամբ, Պողոս առաքյալի պես, համոզվում է քրիստոնեական հավատքի զորությանն ու փառքին, երբ վճռորոշ ճակատամարտից առաջ իրեն հայտնված Քրիստոսի կողմից հրահանգ է ստանում հաղթության հասնելու համար խաչի նշանն ունենալ իր զորքի մեջ: Այս ասպվածապարգեւ հաղթանակից հետո Կոստանդին կայսրն իր հովանու տակ է վերցնում քրիստոնյաներին, եւ քրիստոնեությունը դարձնում է գերիշխող կրոն ողջ կայսրության տարածքով մեկ: Նա ցանկանում է Պաղեստինում՝ քրիստոնյաների համար նվիրական եւ սուրբ վայրերում, Աստծո եկեղեցիներ կառուցել, ինչպես նաեւ՝ գտնել այն Խաչափայտը, որի վրա խաչել էին Քրիստոսին: Նրա ցանկությունն իրականացնելու համար մեծ ուրախությամբ այս գործը հանձն է առնում կայսեր մայրը՝ Հեղինե թագուհին, որ Աստծո նախախնամությամբ ու հրաշագործ միջամտությամբ դժվարին դեգերումներից հետո ի վերջո Երուսաղեմում կարողանում է գտնել Տերունական խաչափայտը:

Ահա սա է այսօրվա տոնի ամփոփ պատմությունը, եւ կցանկանայի այդ պատմությունից առանձնացնել մի դրվագ: Երբ երկար փնտրտուքից հետո կարողանում են գտնել այն վայրը, որտեղ հրեաները հողի մեջ թաղելով թաքցրել էին Տիրոջ Խաչը, փորել են տալիս եւ երեք խաչափայտ հանում այնտեղից, որոնցից մեկը Քրիստոսինն էր: Սակայն հարկավոր էր իմանալ, թե այդ երեքից ո՞ր մեկն էր Նրանը: Եւ այդ ժամանակ Երուսաղեմի Մակարիոս եպիսկոպոսը, որ Հեղինե թագուհու հետ գլխավորում էր տերունական Խաչի փնտրման աշխատանքները, ձայն է տալիս ներկա եղողներին, որոնք կարծես թե սկսել էին ընկրկել իրենց հավատքի մեջ, եւ ասում. «Եթե ասպվածային նախախնամությունը չկամեցավ Տիրոջ խաչն ընդմիշտ թողնել հողի տակ, մի՞թե թույլ կտա, որ այն անհայտ մնա, մի՞թե թույլ կտա, որ մենք տերունական Խաչի փոխարեն երկրպագություն մատուցենք ավազակի խաչափայտին: Աստված ինքը մեզ ցույց կտա մեր փրկչի Խաչափայտը»: Եւ սկսում են ջերմեռանդորեն աղոթել՝ ամուր հավատ եւ հույս ունենալով Աստծո բարեգութ ողորմածության վրա: Եւ, իսկապես, աստվածային պատասխանը չի ուշանում: Մակարիոս եպիկոպոսի խորհրդով մի ծանր հիվանդ կնոջ են բերում եւ սկսում են հերթով մի խաչից մյուսին հպել նրան: Երկու խաչափայտերից ոչ մի նշան չի տրվում, սակայն երբ այդ կինը դիպչում է երրորդ խաչին, նույն պահին առողջանում է: Նաեւ այդ ժամանակ մի հանգուցյալի էին տանում թաղելու, եւ նրան եւս դնում են հիվանդ կնոջը բժշկող խաչափայտին, ինչից հետո հանգուցյալն իսկույն կենդանանում է: Եւ այդ կերպ իմանում են Տիրոջ Խաչափայտը, որի միջոցով Աստված հրաշքներ է գործում եւ ցույց տալիս Իր Խաչի կենարար զորությունը: Աստված Իրեն փնտրողների եւ Իրենից խնդրողների համար բացում է այն դուռը, որն աղոթքով բախում էին Մակարիոս եպիսկոպոսը, Հեղինե թագուհին եւ նրանց հետ եղողները:

Սիրելի՛ հավատացյալներ. Տիրոջ Խաչի խորհուրդը փրկության խորհուրդն է: Սակայն յուրաքանչյուր մարդու համար փրկությունն սկսվում է դեպի Աստված տանող ճանապարհը փնտրելով, քանզի փրկվել նշանակում է գտնել Աստծուն, իսկ Աստծուն փնտրելն արդեն իսկ Աստծուն գտնելն է, ինչպես որ ասում են Եկեղեցու հայրերը: Գյուտ Խաչի տոնի այս պատմությունն իր մեջ կոչ ունի ուղղված այն մարդկանց, ովքեր կորցրել են Քրիստոսին փնտրելու ցանկությունը եւ դարված են այլ բաներ փնտրելով: Այսօրվա տոնի խորհուրդը մեզ համար մի օրենք է բացում, որը երբեք չպետք է մոռանանք: Հիշենք առաջին հայացքից դարօրինակ թվացող՝ Քրիստոսի այս խոսքերը՝ «Հոգ մի՛ քաշեք եւ մի՛ ասեք, թե ի՞նչ եք ուտելու, ի՞նչ խմելու կամ ի՞նչ հագնելու, քանի որ այդ ամենը հեթանոսներն են փնտրում, այլ նախ եւ առաջ փնտրեցե՛ք Աստծո արքայությունը եւ Նրա արդարությունը եւ այդ ամենն ավելիով կտրվի» (Մատթ. Զ. 31-33): Սա ըմբռնելը շատ կարեւոր է, քանի որ այն, ինչոր մենք փնտրում ենք, մեզ համար ուղղորդող է: Շատերը Տիրոջ այս խոսքերը խեղաթյուրված կերպով են հասկանում. նրանք հեգնանքով են ընդունում եւ դարօրինակ են համարում այդ ամենը:

Քրիստոս ասաց՝ մի՛ փնտրեք այն, թե ինչ պիտի ուտեք կամ խմեք կամ հագնեք. ի՞նչ է սա արդյոք նշանակում: Տերունական այս խոսքերը կարող ենք թարգմանել այսպես՝ մի՛ մտածեք, թե միայն այս երկրավոր մակարդակի վրա փնտրելն է հատկապես

համարվում կյանքի իմաստը եւ ձեզ բարիք է բերում. ո՛չ, այդ փնտրում են հեթանոսները, այսինքն՝ մոլորված մարդիկ: Չկա երջանկություն այդ ամենը փնտրելու ճանապարհին: Ուտելու, խմելու, հագնելու որոնման ճանապարհը, այսինքն՝ մամոնային եւ աշխարհային բարիքներ փնտրելը խաբկանք է, որով դուք միայն ձեզ խաբում եք: Պետք չէ փնտրել այս աշխարհային բարեկեցությունը. եթե դուք այդ փնտրեք, ապա ոչինչ չեք ստանա: Այլ նախ եւ առաջ ձեր առջեւ նպատակ ունեցեք փնտրելու հոգեւոր՝ հավիտենական բարիքը, Աստծո արքայությունը, այսինքն՝ փնտրեցեք Աստծուն, Նրա արդարությունը, Նրա սրբությունը, ապրվածային ճշմարտությունը: Եւ եթե այս լինի ձեր կյանքի իմաստը, ապա դուք իսկապես կստանաք այն երկրավոր բարիքները, որոնք կապված կլինեն ձեր՝ հոգեւորը փնտրելուն եւ երբեք չեն վնասի ու երջանկություն կբերեն ձեզ: Սակայն առանց Աստծո եւ առանց Աստծո արքայությունը փնտրելու հարստությունը ձեզ ուրախություն չի պարգեւի. փառքը մի պահ է, այնուհետեւ կլինի փառազրկություն, առողջությունը մազից կախված է, մի հարված եւ վերջ, այլեւս ոչինչ չկա: Ամեն ինչ ոչնչանում է, ամեն ինչ ձախողվում է, ամեն ինչ իմաստազրկվում է, եթե մարդ չունի Աստծո արքայությունը փնտրելու ձգտումը: Փակուղի է այնտեղ, ուր մարդ ծանրաբեռնված է նյութապաշտությամբ: Հենց ինքը՝ մահը, անընդհատ մեզ հայտնում է նյութական փնտրտուքների անիմաստ եւ խենթ լինելը:

Քրիստոնյաները երկրային բարիքները չեն անտեսում, եւ Քրիստոսի այս խոսքերը բնավ չեն նշանակում, թե մերժում է այդ ամենը: Ինքը՝ Քրիստոս, սովորեցրեց մեզ խնդրել մեր հանապազօրյա հացը, սովորեցրեց նույնիսկ աղոթել դրա համար: Նա իր առաջին հրաշքը գործեց Կանայի հարսանիքում՝ մասնակցելով այդ հարսանեկան խրախճանքին: Ինչ էր նա սրանով ցանկանում հայտնել. որ մարդկային բնությանը հատուկ որեւէ տեսակի ուրախություն հակառակ չէ մարդուն եւ Աստծուն: Եւ այդ ամենը կարող է լինել ճշմարիտ, բանական, բարիք բերող, մարդու համար բարի միայն այն դեպքում, երբ մարդկային կյանքի նպատակն ուղղված լինի Աստծուն: Այսինքն՝ ի՞նչ եմ ես ուզում՝ Աստծո՞ւն, թե՞ այս բարիքները: Ես ուզում եմ ինչ-որ թանկարժեք իր բռնել իմ ձեռքում, բայց որ հետո այն ինձանից վերցնե՞ն, թե՞ ուզում եմ մնայուն, հավիտենական, չփչացող, չժանգոտող գանձ: Մեզ կյանքը տրվել է, որպեսզի այս ընտրությունը կատարենք: Ահա թե մեզ ինչի առաջ է կանգնեցնում այսօրվա տոնի խորհուրդը՝ փնտրե՞նք եւ գտնե՞նք այդ Խաչը, թե՞ թողնենք, որ այն մնա հողի մեջ թաղված:

Սիրելինե՛ր, Եկեղեցին այս տոնով հիշեցնում է, որ մենք պետք է փնտրենք Աստծո արքայությունը, որ այդ արքայությունը մոտ է մեզ, եւ միայն մեզանից է կախված՝ կհասնենք այդ նպատակին, կստանանք այն պսակը, որը յուրաքանչյուրիս համար պատրաստել է մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:

Շնորհք, Սէր եւ Խաղաղութիւն Աստուածային եղիցին ընդ Ձեզ, ընդ ամենեսեանդ, ամեն: